ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

18 օգոստոսի 2022 թվականի N 1304 - Ն

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՎԵՐԱԲԱՇԽՈՒՄ, ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ, ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 23-Ի N 2121-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 19-րդ հոդվածի 3-րդ մասը, 23-րդ հոդվածի 3-րդ մասը, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածները, «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետը, Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման 1-ին կետով հաստատված՝ գնումների գործընթացի կազմակերպման կարգի 3-րդ և 57-րդ կետերը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Անհետաձգելի համարել Հ8, Երևան-Արտաշատ-Այգեվան կմ 33+500 կմ 42+600 (Արարատ բնակավայր) ճանապարհատվածների վրա առկա՝ սույն որոշման 2-րդ կետում նշված ջրամատակարարման և ջրահեռացման ցանցերի վերակառուցման աշխատանքները:

2. Թույլատրել Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ջրային կոմիտեին՝

1) հանդես գալ որպես պատվիրատու և նախագծային փաստաթղթերում փոփոխությունների և դրանց փորձաքննության իրականացման նպատակով կնքել համաձայնագիր «ՋԻՆՋ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության հետ՝ Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի և «ՋԻՆՋ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության միջև 2020 թվականի մայիսի 8-ին կնքված «Գ. Արարատ համայնքի ջրամատակարարման համակարգի վերակառուցման աշխատանքների նախագծման խորհրդատվական ծառայություն-ների մատուցման» N ՋՆԾ-ԽԲՄ-ԾՁԲ-2020/10 պայմանագրի շրջանակում, Հ8, Երևան-Արտաշատ-Այգեվան կմ 33+500 կմ 42+600 (Արարատ բնակավայր) ճանապարհահատվածի վրա գտնվող ջրամատակարարման և ջրահեռացման ցանցերի վերակառուցման աշխատանքների նախագծային փաստաթղթերում փոփոխություններն ընդունելու համար.

2) փոփոխություն կատարել «Բիլդեր Քոնսթրաքշն» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության հետ 2021 թվականի մայիսի 6-ին կնքված N ՋԿ–ՀՄԱԱԾՁԲ-21/6-Ա պայմանագրով նախատեսված աշխատանքների չկատար-ված մասի համար սահմանելով կատարման նոր ժամկետ, բայց ոչ ուշ, քան մինչև 2022 թվականի հոկտեմբերի 30-ը՝ չկիրառելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 33-րդ և 56-րդ կետերի 4-րդ ենթակետերի պահանջները: «Բիլդեր Քոնսթրաքշն» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունն աշխատանքներն իրակա-նացնելու է 2021 թվականի մայիսի 6-ին կնքված N ՋԿ–ՀՄԱԱԾՁԲ-21/6-Ա պայմանագրի արժեքի սահմաններում.

3) փոփոխություն կատարել սույն որոշման 2-րդ կետի 1-ին ենթակետում նշված պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարման նկատմամբ տեխնիկական հսկողության ծառայությունների մատուցման համար «Սուֆետ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության հետ 2021 թվականի մայիսի 5-ին կնքված N ՋԿ-ՀՄԱԾՁԲ-21/2-Տ և հեղինակային հսկողության իրականացման

համար «ՋԻՆՋ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության հետ 2021 թվականի մայիսի 6-ին կնքված N ՋԿ-ՄԱԾՁԲ-21/3-Հ-1 պայմանագրերում՝ սահմանելով կատարման նոր ժամկետ, բայց ոչ ուշ, քան մինչև 2022 թվականի սեպտեմբերի 30-ը՝ չկիրառելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 33-րդ և 56-րդ կետերի 4-րդ ենթակետերի պահանջները:

3. Սահմանել, որ՝

1) սույն որոշման 2-րդ կետի 2-րդ ենթակետում նշված աշխատանքների ֆինանսավորումը կիրականացվի նախագծանախահաշվային փաստաթղթերի փորձագիտական դրական եզրակացության առկայության դեպքում.

2) սույն որոշման 2-րդ կետում նշված պայմանագրերում համապատասխան փոփոխությունները կատարվում են սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո 10-օրյա ժամկետում:

4. «Հայաստանի Հանրապետության 2022 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի N 1 հավելվածի N 2 աղյուսակում կատարել վերաբաշխում, փոփոխություններ և լրացումներ, N 1 հավելվածի N 3 աղյուսակում և Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի դեկտեմբերի 23-ի «Հայաստանի Հանրապետության 2022 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» N 2121-Ն որոշման NN 3, 4, 5, 9, 9.1 և 10 հավելվածներում կատարել փոփոխություններ և լրացումներ՝ համաձայն NN 1, 2, 3, 4, 5 և 6 հավելվածների:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Մ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

Երևան

19.08.2022
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ